ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2013 թվականի N 218-Ա

ք. Հրազդան

Լ. ԽՈՑԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 71-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ձորաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 30-ի N 4 որոշումը, եզրակացությունը և *Լ. Խոցանյանի* անձնական դիմումը՝ **որոշում եմ.**

1. ***Լյուդմիլա Խոցանյանին*** 2013 թվականի հունիսի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ձորաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ եռօրյա ժամկետում կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ձորաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հանձնման-ընդունման աշխատանքները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ